ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
(ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ)

ՈՐՈՇՈՒՄ № 1/2-Ն

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ ընտրվելու մասին

13.09.2025թ. ք.Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) հաշվիչ հանձնաժողովը (այսուհետ՝ Հաշվիչ հանձնաժողով), մասնակցությամբ հանձնաժողովի նախագահ Գևորգ Գևորգյանի, անդամներ՝ Աշոտ Խլոյանի, Գագիկ Մայիլյանի, Կարինե Ղաշանգյանի, Աստղիկ Գևորգյանի, Հեղինե Մանուկյանի, Նազիկ Մալխասյանի, Հովհաննես Եգորյանի և Հասմիկ Թադևոսյանի,

Հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 9.1-րդ հոդվածի, Պալատի կանոնադրության 7.11-րդ, 15.25-րդ, 15.30-րդ և 17.3-րդ կետերի պահանջները,

հաշվի առնելով 13.09.2025 թվականին տեղի ունեցած ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի ընտրության արդյունքների ամփոփման վերաբերյալ ՀՀ փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողովի 13.09.2025թ. թիվ 2-Ն արձանագրությունը,

ՈՐՈՇԵՑ՝

1. ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից չորս տարի ժամկետով ՀՀ փաստաբանների պալատի նախագահ ընտրված համարել փաստաբան Սիմոն Ալբերտի Բաբայանին՝ քվեաթերթիկներ ստացած ընդհանուր 1411 (հազար չորս հարյուր տասնմեկ) փաստաբանների 1383 (հազար երեք հարյուր ութսուներեք) «Կողմ» ձայներով (98 %):
2. Սահմանել, որ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի լիազորությունները սկսվում են 2025 թվականի հոկտեմբերի 5-ից:
3. Սահմանել, որ ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի որոշումը համարվում է ընդունված սույն որոշման հրապարակման պահից:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝ Գևորգ Գևորգյան

Հաշվիչ հանձնաժողովի քարտուղար՝ Աշոտ Խլոյան

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝ Գագիկ Մայիլյան

Կարինե Ղաշանգյան

Հեղինե Մանուկյան

Նազիկ Մալխասյան

Հովհաննես Եգորյան

Աստղիկ Գևորգյան

Հասմիկ Թադևոսյան